



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3483

24547

24548

24549

24550

891.71

9.83

2003

1108

837
2-53
ՀԱՅ. ՅԵՂ. ՍՕՑ. ԴԵՄՕԿ. Կ. - ԹԻՒՆ

Պրոյէկտարիներ թոյր երկրների՝ ձիսցե՛լ:

Մ. ԳՈՐԿԻ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

ԱՆԴԵՂԻՆԵՐ



Հրատ. «Ընկերություն»

A. A. Gor'ki
SIVAS
Relieur

No. 2

Թարգմ. Անրիկան

ԲՈՒՍՉՈՒՔ

Տպարան «Վերածնունդ»-ի



ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

(Մախիս Գորկիի)

Այգուս, սենեակիս լուսամուտի յե-
տեւում, հակակի լերկ ճիւղերի մէջ,
թռչկոտում են ծխերն եւ տաք տաք
խօսում, իսկ հարեան տան տանիքի
թեքւացքի վրայ նստած է յարգելի
ազուաւը. լսելով մոխրադոյն թռչնակ-
ների խօսակցութիւնը՝ նա հպարտու-
թեամբ գլուխը շարժեց: Արեւի լոյ-
սով ողողւած ջերմ օդը, ամէն մէկ ձայն
բերում է իմ սենեակն եւ ես լսում եմ
առակի ոչ բարձր ձայնը, լսում եմ
տերեւների մեղմիկ շշուռձը, հասկա-
նում եմ, թէ իմ լուսամուտի շրջա-
նակի վրայ աղաւնիներն ինչի մասին
են գուրգուրանքով խօսում. եւ օդի

50352-ա/հ

36792-06

հետ լցուում է իմ սիրտը գարնան երաժշտութիւնը :

— Չըկ-չըրըկ, — դառնալով ընկերներին ասում է ծիտը, — ահա մենք նորից հասանք գարնանը : Ճիշտ չէ՞ արդեօք : Չըկ-չըրըկ :

— Փաւստ, փաւստ, — նազով երկարացնելով պարանոցը՝ պատասխանում է ագուաը :

Ես լաւ եմ ճանաչում այդ պատկանելի թռչունին, նա այլ կերպ չէ խօսում, միշտ կարճ ու համոզեցուցիչ մտքով : Բնականից լինելով յիմար, նա, վախկոտ էլ է ինչպէս ագուաների մեծ մասը : Նա հասարակութեան մէջ ամենալաւ դիրքն ունէ կը առնէ մէկ ձմեռ ձեր ազատիւնների համար մէկ տեւ բարեգործական բան է սարքում : Ես ճանաչում եմ ծտին, չընայած որ նա արտաքուստ թեթեւամիտ եւ նոյնիսկ ազատամիտ է երեւում, սակայն ի՛րապէս այդ թռչունի խելքը գլխին

է : Նա թռչկոտում է ագուաի մօտ արտաքուստ յարգանքով, սակայն սրտի խորքում լաւ է իմանում նրա գինն եւ երբեք չէ խանդարում նրա, ագուաի մասին, զեղեցիկ պատմութիւններ ասել :

Իսկ շրջանակի վրայ ջահել, պրճնազարդ ազանին տաք կերպով համոզում է հեզիկ էգ ազանուն՝ — «Ես կը մեռնեմ, կը մեռնեմ հիասթափումից, եթէ դու եւս ցոյց չըտաս սէր՝ նրման իմ սիրոյ» :

— Իսկ զրտէք աիրուհի, զեղձանիկները թօան եկան, հաղորդում է ծիտը :

— Փաւստ :

Եկան ու աղմուկում են, ստոստում, ճուռկում : Սաստիկ անհանգիստ թըռչուններ են : Սարեակներն էլ եկան նրանց յետեւից . . . Ինչպէս մի, ա, հահահա : Երէկ, զրտէք, ես նրանցից մէկին կատակաբար հարցրի. «Ի՞նչ է սիրելիս, ելա՞ք» : Պատասխանեց

յանդուդն : Այդ թռչուններն ամենեւին չեն յարգում խօսակցի աստիճանը, կօչումը, հասարակական դիրքը եւ պալատական ծիս եւ . . .

Իայց այստեղ ծխնելոյզի անկիւնից տանիքի վրայ երեւաց յանկարծ ջահել ազդան ու կիսաձայն ասաց. «ուշադրութեամբ ականջ դնելով՝ համաձայն ծառայութեանս պարտականութեան՝ օդի, ջրի եւ երկրի խորքերում բնակւող արարածների բոլոր խօսակցութիւններն եւ անսայթաքն տեսելով նրանց վարքին, պատիւ ունիմ ծանուցանելու, որ յիշեալ դեղձանիկներն ասէն՝ ինչի մասին բարձր ճշտողում են եւ համարձակում են յուսալ, իբր թէ, բնութեան մօտալուտ վերանորոգութեան վրայ » :

— Չըկ-չըբըկ, բացականչեց ծխոն անհանգստութեամբ յետ նայելով լըրտուի վրայ :

Իսկ ազդաւը բարեացակամութեամբ գլուխը շարժեց :

— Արդէն գարուն է, դա առաջին անգամը չէ, որ լինում է, ասաց ծիւտը : Իսկ ամբողջ բնութեան վերանորոգութեան մասին, դա . . . իհարկէ ցանկալի է . . . եթէ դուրս գայ այն ոյժերի թոյլաւութիւնից, որոնց որ վերաբերում է այդ անիլ :

— Փաստ, — ասաց ազդաւը, խօսակցի վրայ բարեացակամ հայեացք ձգելով :

— Վերոյիշեալին պէտք է կցեմ, — շարունակեց ազդաւը, — որ յիշեալ դեղձանիկներն անբուականութիւն ցոյց տւին այն պատճառով, որ այն առեակներն, որոնցից նրանք իրենց ծարաւն են յագեցնում, իբր թէ, պղտոր են, նրանցից մէկ քանիսը նոյնիսկ համարձակւում են ազատութեան մասին երազել . . .

— Ա՛հ, նրանք միշտ այդպէս են, — բացականչեց ծիւտը, — դա նրանց ջահելութիւնից է, դա բոլորո-

վին վատնդատ որ չէ : Ե՛ս էլ ջահել եմ
 եղել եւ նոյնպէս երազել նրա... մա-
 սին : Հատկանալի է համեստ էի երա-
 զում... Սակայն յետոյ դա անցաւ :
 Երեւան եկաւ ուրիշը, նա աւելի ի-
 րական (ըէալ) էր... հա-հա-հա... եւ,
 գիտէք, աւելի ախորժելի, աւելի ան-
 հրաժեշտ ծտերի համար... հա-հա...

— Է-հըմ լուեց ազդու կոկոսց :
 Մայրիքի տերեւները վրայ երեւաց իս-
 կական քաղաքացիական ծովաթու թա-
 կը (նիգիր), նա ողորմածաբար բա-
 րեւեց թռչունների հետ ու ասաց :

— Է՛ պարտններ, դուք զգում էք,
 օղի մէջ ինչ որ բանի հոտ է գալիս, է՛ :

— Գարնանային օդ է, ձերդ-թիւն,
 — ասաց ծխարը :

Իսկ ազոտը միայն գլուխը թե-
 քեց զէպի կողքն եւ կոկոսաց մեղմ
 ձայնով՝ նման ոչխարի մայոցին :

— Դէ, այո՛... երէկ վիճակի (թըղ-
 թախաղ) փամանա՛լ էլ ասաց նոյնպէս

մէկ տոհմական պատուաւոր յանէն՝ ինչ
 որ բանի հոտ է գալիս... իսկ ես պա-
 տասխանեցի՝ տեսնենք, հոտ քաշենք,
 քննենք, Պատճառաբանւած է. չէ՞ :

— Ճիշդ այդպէս է, ձերդ-թիւն :

— Կատարելապէս պատճառաբանւած
 է, համաձայնեց ծխարը : Միշտ, ձերդ-
 թիւն, պէտք է սպասել : Պատուաւոր
 թռչունը միշտ կը սպասէ :

Երկնքից այդու ձեզբւածքի վրայ
 իջաւ արոտոյան եւ նրա վրայով վա-
 զելով՝ փնթփնթաց :

— Արշալոյսն ի՛ր փպիտով մեղմիկ
 հանգչնում է աստղերն երկնքում...
 Գիշերը գունաթափւում է : Գիշերը
 դողում է եւ, ինչպէս սատոյցն արեւի
 տակ, հալւում է գիշերային թանձր
 խաւարի ծանր ծածկոցը... Ինչպէս
 քողցր ու թեթեւ է շնչում կուրծքս՝
 լցւած լոյսին եւ ազատութեանը դի-
 մաւորելու լիառատ յոյսով :

— Այդ ի՛նչ թռչուն է. խճճոտ-
 դէմ հարցրեց ծովաթու-թակը :

-- Արտոյտ է, ձերդ-թիւն, խիստ
կերպով ասաց ազուաւը ծխնելոյզի յե-
տեւից :

-- Բանաստեղծ է, ձերդ-թիւն,
խոնարհարար աւելացրեց ծիտը :

Ծովաթութակն աչքի սաղիով ա-
ծեց բանաստեղծի վրայ ու խոխուաց :

-- Ըմբ... ինչպէս մոխրագոյն է
... անճոռնի' : Նա կարծես ինչ որ
արեւի մասին... կարծես ազատութեան
մասին երգեց :

-- Ճիշտ այդպէս է, ձերդ-թիւն,
-- հաստատեց ազուաւը -- նա պարտաւ-
ւում է անհիմն յոյսեր արթնացնելով
փոքրիկ թռչնիկները սրտերում,
ձերդ-թիւն :

-- Դատապարտելի է... անբիտ :

-- Կատարելապէս ճիշտ է, ձերդ-
թիւն, ասաց ծեր ծիտն, այո', ան-
միտ է, Ազատութիւնը, ձերդ-թիւն,
մէկ անորոշ բան է, եւ, այսպէս ասած
անորսալի...

-- Սալայն, եթէ չեմ սխալուում,
դուք ինքներդ այդ էիք կանչում...

-- Փառաստ, յանկարծ կանչեց
ազուաւը.

Ծիտը շփոթեց :

-- Արդարեւ, ձերդ-թիւն, միան-
գամ կանչեցի... սալայն յանցանքը
թեթեւացնող պարագաներում...

-- Իսկ... այսինքն ինչպէս :

-- Կամաց ըլաւեցի կեցցէ ազա-
տութիւն եւ իսկոյն աւելացրի՝ օրի-
նականոթեան սանձաններում :

Ծովաթութակը նայեց ազուաւին :

-- Ճիշտ այդպէս է, ձերդ-թիւն,
պատասխանեց ազուաւը :

-- Ես, ձերդ-թիւն, լինելով պա-
լատական ծիտ, ինձ չեմ կարող թոյլ
տալ լուրջ վերաբերուել, որովհետեւ
սոյն հարցը չէ նշանակւած նրանց թը-
ւում, որոնք մշակել է վարչութիւնն,
որի մէջ ես պատիւ ունեմ ծառայելու :

-- Փառաստ, նորից կուտեց ազ-

ուսւր: Այդ միեւնոյն է թէ հաստա-
տիւլ:

Իսկ փողոցից հոսում են առակնե-
րըն եւ երգում մեղմիկ երգ այն գետի
մասին. ուր նրանք ճանապարհի վեր-
ջում ազատուում են, եւ իրենց ապա-
գայի մասին ասում:

— Լայն, սրընթաց ալիքները մեզ
կընդունեն, կը գրկեն եւ իրենց հետ
կը տանեն ծովն ու նորից, գուցէ,
մեզ կրկինք բարձրացնեն արեւի տաք
ճառագայթներն, իսկ կրկնրից մենք
կրկին, որպէս զոլացուցիչ ցող, գի-
շերները կը թափուենք՝ ձեան կամ ա-
ռատ անձրևի հետ:

Հրաշալի արև՝ գարնան փաղաքշող
արեգակը ժպտում է պայծառ երկն-
քում աստուծոյ ժպիտով՝ լի ըստեղ-
ծադործութեան տենչով լվաւած սի-
րով:

Այգու անկիւնում, հին մայրի ծառի
ճիւղերի վրայ նստած է դեղձանիկ-

ների երանն եւ նրանցից մէկն ոգե-
ւորած երգում է ընկերների համար
լուր մէկ տեղ լսած երգը՝ մըրկահաւի
մասին:

Ծովի սպիտակ հարթութեան վը-
րայ քամին ամպեր է կուտակում: Ամ-
պերի եւ ծովի միջեւ հպարտ որոտում
է մըրկահաւը՝ նման սեւ շանթի: Մերթ
թեւերը քսելով ալիքներին, մերթ
սլաքի նման նետելով դէպի ամպե-
րը՝ նա կանչում է, — եւ ամպերը
թռչունի համարձակ ձայնի մէջ ուրա-
խութիւն են լսում:

Այդ ձայնի մէջ փոթորիկի ծարա-
կայ: Բարկու թեան ոյժը, տենջանքի
բոցն, եւ յաղթու թեան հաւատը՝ ամ-
պերը լսում են այդ ձայնի մէջ: Ա-
րագիլները հոտաչում են մըրբիլի պատ-
ճառով, հոտաչում են, պտտում ծովի
վրայ եւ պատրաստ են իրենց սար-
սափը փոթորկից՝ թաքցնելու նրա
յատակում: Եւ ջրասուղակները (գա-

գարի) նոյնպէս հառաչում են. նրանց անմատչելի է հոգսալից կեանքի քաղցրութիւնը, հարւածների գոռոցը նըրանց վախեցնում է: Յիմար ծախսագը (պինգւին) երկիւղով ժայռերում ծածկում է իւր իւզոտ մարմինը . . . Միայն հպարտ մրրկահաւն է որ աղատ ու համարձակ որոտում է փրփուրից սպիտակացած ծովի վրայ:

Ամպերն աւելի մոայլում են եւ ծովից ներքեւ են իջնում ալիքները ե՛ւ երգում են ե՛ւ պարում, դէպի վեր որտաի գիմաց որտա է գոռգոռում: Հողմերի հետ կուելով ալիքները փրփրած, բարկութեամբ մոնչում են: Ահա քամին ամուր գրկելով շրջապտտում է ալիքների մէկ ամբողջ կոյտ եւ նրանց թափով բարկացած շպրտում վայրենի ժայռերի վրայ, ջարդ ու փշուր անելով եւ փոշի դարձնելով այդ զմբուխտեայ հսկաները:

Մրրկահաւը բզաւելով որոտում է

նման սեւ շանթի. սլաքի նման ծակում-անցնում է ամպերն, ալիքների փրփուրը թեւերովը պոկում:

Ահա՛ նա դելի, — փոթորկի սեւ, հպարտ դելի—նման սլանում է, ե՛ւ ծիծաղում, ե՛ւ հառաչում. . . նա ամպերի վրայ ծիծաղում է. նա ուրախութիւնից հառաչում է:

Որտաի յուզմունքի մէջ, — հոտառո՛ւ դել. — նա վաղուց յոգնածութիւն է զգում. նա հաւատացած է, որ ամպերն արեգակին չեն ծածկիլ, ո՛չ, չեն ծածկիլ:

Քամին տոնում է . . . Որտաը գոռգոռում. . . կապոյտ բոցի նման ամպերի կոյտերն ծովի անյատակութեան վրայ բոցալառում են: Ծովը ոռնում է եւ շանթերի սլաքները հանցցնում իւր ճեղքւածքների մէջ:

Այդ շանթերի անդրադարձումն ուղղակի կրա՛կ-օձերի նման լցում են ծովը, անհետանում:

— Մըբե՛կ: Շուտով մըբեիկ կը լի-
նի: Այդ համարձակ մըբկահաւը հը-
պարտ մանչում է կայծակները մէջ՝
յոզմունքով որոտացող ծովի վրայ-
գա յաղթութեան մարգարէն է. որ
կանչում է՝

— Թո՛ղ արեղի՛ ուժգին գայ փոքո-
րիկը :

Վ Ե Ր Ձ



20

U.S.

Tracy

3483

24547

24548

24549

24550

2013

